ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆ

# ԻՆՉ ԲԱՆԱՁԵՎ Է ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԲՈՒՆԴԵՍԹԱԳԻՆ

***Ստորեւ ներկայացնում ենք գերմանացի հայագետ, դոկտոր Թեսսա Հոֆմանի «Ճանաչում» աշխատանքային խմբի մարտի 4-ի հայտարարությունը Քրիստոնեա-դեմոկրատական, Քրիստոնեա-սոցիալիստական կուսակցությունների միասնական խմբակցության կողմից գերմանական Բունդեսթագի քննարկմանը ներկայացված՝ «1915 թվականի ապրիլի 24-ի՝ հայերի հալածանքների եւ կոտորածների սկզբնավորման 90-րդ տարելիցի հիշման» բանաձեւի վերաբերյալ:***

Բանաձեւը ներկայացնողները կամենում են *«1915թ. ապրիլի 24-ի՝հայերի հալածանքների եւ կոտորածների սկզբնավորման 90-րդ տարելիցի հիշման»* իրենց քայլով գերմանական կողմի ներդրումը բերել «թուրքերի եւ հայերի հաշտեցման» հարցում: Այդ առնչությամբ «Ճանաչում» աշխատանքային հանձնախումբը որդեգրում է հետեւյալ դիրքորոշումը:

Որքան նախաձեռնությունը ողջունելի է, այնքան խնդրահարույց է նրա կերպը: Հայտ ներկայացնողները կամենում են նպաստել հայ-թուրքական հաշտեցմանը: Սակայն նրանք միայն այն ժամանակ օրինակելի ներգործություն կկարողանան ունենալ, երբ ժամանակի ոճրագործությունները քննված եւ բնութագրված կլինեն: Չնայած հայտ ներկայացնողները խոսում են «պատմական մեղքի» եւ «պետական բռնությունների» մասին, սակայն որպես կանոն խուսափում են «ցեղասպանություն» բառից, ինչպեսեւ այն հանգամանքի մատնանշումից, որ «հալածանքների» կամ «մահերթերի» դեպքում խոսքը վերաբերում էր Օսմանյան բազմազգ պետությունը միաէթնոս դարձնելուն, ինչը, այսպես կոչված՝ երիտթուրքերի ազգայնական ռեժիմի կողմից կշռադատվել եւ նախապատրաստվել էր դեռ նախապատերազմական շրջանում:



Մարդու իրավունքների մեր կազմակերպությունը այն կարծիքին է, որ պետականորեն ծրագրված եւ ղեկավարված՝ այդ Ցեղասպանությունը վերապրածները եւ զոհերի հետնորդները իրավունք ունեն գերմանական օրենսդիրից պահանջել ցուցաբերելու իրավաբանորեն ձեւակերպված դիրքորոշում: Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում եւ նրանից դուրս ապրող հայերը ակնկալում են, որ Գերմանիան, որպես Օսմանյան կայսրության կարեւորագույն ռազմական դաշնակից, կհետեւի այն 16 պետությունների, ինչպես նաեւ զանազան միջազգային մարմինների (Եկեղեցիների համաշխարհային ընկերակցություն, Եվրոպական պառլամենտ, Եվրոպական խորհուրդ, Միավորված ազգերի կազմակերպության փոքրամասնությունների պաշտպանության եւ խտրականության կանխման հանձնաժողովի) օրինակին եւ 1915-16թթ. մահերթերն ու կոտորածները ՄԱԿ-ի ցեղասպանության կոնվենցիային համապատասխան կճանաչի որպես Ցեղասպանություն:

«Ճանաչում» աշխատանքային հանձնախումբը դեռ 2000թ. ապրիլի 13-ին մի դիմում էր հղել Բունդեսթագին, որտեղ գերմանական օրենսդիրին կոչ էր արվում.

*-ճանաչել Ցեղասպանության փաստը,*

*-Թուրքիայի Հանրապետության կառավարությանը եւ օրենսդիրին հորդորել էր ճանաչել Ցեղասպանության պատմական իրողությունը:*

**Բունդեսթագին ներկայացված «1915թ. ապրիլի 24-ի՝ հայերի հալածանքների եւ կոտորածների սկզբնավորման 90-րդ տարելիցի հիշման բանաձեւի տեքստը.**

«Օսմանյան կայսրության իրավահաջորդը՝ Թուրքիայի Հանրապետությունը, մինչ օրս վիճարկում է այն հանգամանքը, որ 1915թ. իրադարձությունները ծրագրված են եղել, եւ որ հայերի վերաբնակեցման ընթացքում տեղի ունեցած սպանությունները ու իրագործված կոտորածները օսմանյան կառավարության կամքով են կատարվել: Այդ ժխտողական կեցվածքը հակասում է հաշտության գաղափարին, որը ներկայացնում է Եվրոպական միության համալիր արժեքային համակարգը, որին Թուրքիան ձգտում է անդամակցել:

Այդ իրադարձությունների մեջ Օսմանյան կայսրության կողքին անմիջականորեն ներգրավված պետությունը Առաջին աշխարհամարտի ժամանակ նրա հիմնական ռազմական դաշնակիցն էր՝ Գերմանական կայսրությունը: Գերմանական կայսրության ինչպես քաղաքական, այնպես էլ ռազմական ղեկավարությունը սկզբից եւեթ ամենայն ճշգրտությամբ իրազեկված էր հայերի հալածանքների եւ սպանդի մասին: ԱԳՆ-ի փաստաթղթերը՝ հիմնված Օսմանյան կայսրությունում գերմանական դեսպանների եւ հյուպատոսների տեղեկագրերի վրա, փաստագրում են կոտորածների եւ հալածանքների ծրագրված իրականացումը:

Չնայած գիտության, քաղաքական եւ եկեղեցական շատ գործիչների՝ կանցլերին ուղղված թախանձագին դիմումներին, գերմանական կայսրության ղեկավարությունը, այնուամենայնիվ, բացի բացառապես դիվանագիտական նոտաներից, իր օսմանյան դաշնակցի վրա այլ միջոցներով ազդելու քայլեր չձեռնարկեց: Դրանք էլ առավելապես արեւմտյան Անտանտի կողմից Գերմանիայի դեմ ուղղված բողոքները չեզոքացնելու, այլ ոչ թե թուրք դաշնակցի վրա ներազդելու նպատակ էին հետապնդում:

Այդ պատմական իրադարձությունների քննարկումը անմիջական նշանակություն ունի նաեւ ներկայի համար: Այսօր Թուրքիայի Հանրապետության եւ Հայաստանի Հանրապետության հարաբերությունների կարգավորումը, որոնք չհաղթահարված անցյալի բեռան ներքո էապես տուժում են, առանձնահատուկ կարեւորություն ունի ողջ տարածաշրջանի ապագայի համար: Այն կարող է վերջ դնել Թուրքիայի կողմից մեկուսացված Հայաստանի շրջափակմանը: Հայաստանի մեկուսացման ավարտը նոր հնարավորություններ կստեղծեր Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ՝ Ղարաբաղի հակամարտության խաղաղ լուծման համար:

Եվրոպական միության՝ հարեւանային հարաբերություններին վերաբերող նախաձեռնությունների շրջանակում եւ 20-րդ դարասկզբին գերմանա-թուրք-հայկական հարաբերությունների շրջանակում Գերմանիայի ունեցած խնդրահարույց դերի հիման վրա վերջինիս համար առանձնահատուկ պարտավորվածություն է դառնում հանդես գալու ի նպաստ Հայաստանի եւ Թուրքիայի հարաբերությունների նորմալացման ու բարելավման: Եվրոպական միությունը շահագրգռված է Թուրքիայի ցամաքային ճանապարհի բացմամբ աջակցելու Հայաստանի տնտեսական զարգացմանը եւ տարածաշրջանի կայունությանը:

Գերմանական Բունդեսթագը խոնարհվում է պետական բռնության, սպանդի եւ հալածանքների զոհ դարձած հայերի հիշատակի առաջ: Նա ցավում է Գերմանական կայսրության ունեցած տարակուսելի դերի համար, որը, չնայած Օսմանյան կայսրությունում հայերի կազմակերպված բնաջնջմանը վերաբերող՝ ԱԳՆ-ում գտնվող տեղեկություններին, նույնիսկ միջամտելու փորձ չի արել: Գերմանական Բունդեսթագը այդ հիշումով հարգում է նաեւ այն բոլոր գերմանացիների գործունեությունը, որոնք դժվարին հանգամանքներում եւ հակառակ իրենց կառավարության դիմադրությանը, խոսքով եւ գործով նվիրվել էին հայ կանանց, տղամարդկանց եւ երեխաների փրկությանը: Առանձնապես Յոհաննես Լեփսիուսի գործունեությունը, որը եռանդով եւ ազդու կերպով պայքարել է հայ ժողովրդի դիմակայման համար, պետք է մոռացումից դուրս բերվի, եւ հայ, գերմանացի ու թուրք ժողովրդի միջեւ հարաբերությունների բարելավման իմաստով արժեւորվի ու պահպանվի:

Այսօր շուրջ 4,5 միլիոն հայեր բնակվում են Հայաստանի Հանրապետությունից դուրս, որոնցից 40 000-ը՝ Գերմանիայում: 70-ական թվականներից ի վեր ամենից ավելի Գերմանիայի երկու մեծ եկեղեցիներն են հանդես եկել Թուրքիայից եկած քրիստոնյաների ինտեգրացիայի համար: Այստեղ առաջացած հայ համայնքները նաեւ հանդիպման ու հիշումի հնարավորություններ են ընձեռում: Հենց Գերմանիայում ապրող՝ Թուրքիայից եկած մահմեդականների մեծ թվի առնչությամբ կարեւոր առաջադրանք է պատմությունը ստույգ ներկայացնելն ու դրանով հաշտեցմանը նպաստելը:

Որպես գերմանացիներ, մենք առանձնահատուկ պատասխանատվություն ենք կրում եւ այդ պատճառով կոչ ենք անում թուրքերին եւ հայերին՝ անցյալի գերեզմաններից դուրս հաշտության ու փոխըմբռնման ուղիներ փնտրել:

Գերմանական Բունդեսթագն ըստ այդմ կոչ է անում կառավարությանը.

*-հանդես գալ այն բանի համար, որ Թուրքիան անվերապահորեն քննի եւ պարզաբանի իր դերը հայ ժողովրդի հանդեպ պատմության մեջ եւ ներկայումս,*

*-հանդես գալ Թուրքիայում, առանձնապես կոտորածների առնչությամբ, կարծիքների ազատության արմատավորման համար,*

*-ներազդել, որ Թուրքիան Հայաստանի հետ իր միջպետական հարաբերություններն անհապաղ նորմալացնի,*

*-սեփական ներդրում ունենալ այն հարցում, որ թուրքերի ու հայերի միջեւ ստեղծվի համաձայնություն հաշտության եւ պատմական մեղքը ներելու միջոցով,*

*-ներդրում ունենալ այն բանում, որ հայերի հալածանքների պատմության լուսաբանումը որպես 20-րդ դարի էթնիկական կոնֆլիկտների պատմության լուսաբանման մի բաղկացուցիչ մասը, նաեւ Գերմանիայում իրականացվի»:*

*Բեռլին, 2005թ. փետրվարի 22*

*Նյութերը տպագրության պատրաստեց ԱՇՈՏ ՀԱՅՐՈՒՆԻՆ*